

Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

ՀՀ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՔ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ՕԳՏԱԳՈՐԿՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԺԾԾ	միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ԾԲ	ծրագրային բյուջետավորում
ԾԻԳ	ծրագրերի իրականացման գրասենյակ
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՖՆ	ֆինանսների նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան ընդունված ՀՀ վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1559-Ա որոշմամբ սկսվել է 2019 թվականի բյուջետային գործընթացը և հաստատվել է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Սույն մեթոդական ցուցումները մշակվել են ՀՀ վարչապետի նշված որոշման պահանջներին համապատասխան և նպատակ ունեն օժանդակելու Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններին (այսուհետ՝ պետական մարմին կամ հայտատու)՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում իրենց 2019-2021 թվականների ՄԺԾԾ հայտերի և 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման գործում:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2017-2022թթ գործունեության ծրագրով նախատեսված է ՀՀ պետական բյուջեի 2019թ. և հաջորդ տարիների նախագծերը կազմել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել ծրագրային բյուջետավորման (ԾԲ) ձևաչափով: Այդ կապակցությամբ, անհրաժեշտ է, որ սույն մեթոդական ցուցումներում ներառված բոլոր ձևաչափերը պետական մարմինների կողմից կազմվեն ԾԲ պահանջներին համապատասխան մշակված ծախսային ծրագրերի կառուցվածքին և դրանց ծրագրային դասակարգման դասիչների համակարգին համապատասխան: (ԾԲ պահանջներին համապատասխանող ծախսային ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների ցանկը ըստ պատասխանատու պետական մարմինների և ծրագրային դասակարգման դասիչների լրացուցիչ կտրամադրվի բոլոր հայտատու պետական մարմիններին):

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրեր, ուստի տարածքային զարգացման ծրագրերի գծով հաշվետվողականության մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև բյուջետային քննարկումների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է, որ ՀՀ պետական կառավարման մարմիններն իրենց ՄԺԾԾ և բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմեն ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերին համահունչ, այդ հայտերով առաջարկվող ծախսային ծրագրերի հատկացումները ներկայացնեն նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով՝ համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվությամբ:

Հարկ է հիշել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, առաջիկա երեք տարվա՝ Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայությունների համապատասխան: Միաժամանակ, միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար: Այսինքն,

2019-2021 թվականների ՄԺԾԾ գործընթացը 2019 թվականի բյուջետային գործընթացի ռազմավարական փուլն է:

ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդը կընդունի առաջիկա երեք տարվա հարկաբյուջետային և ծախսային քաղաքականության վերաբերյալ հիմնական որոշումները, մինչև 2018 թվականի մայիսի 18-ը՝ յուրաքանչյուր պետական կառավարման մարմնի գծով կսահմանի ՀՀ պետական բյուջեներից իրականացվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2020 թվականների ճշգրտված և 2021 թվականի կողմնորոշիչ չափաքանակներ (այս որոշումների մասին պետական մարմինները կտեղեկացվեն լրացուցիչ): Դրանք էլ հիմք կհանդիսանան պետական կառավարման մարմինների համար իրենց 2019-2021 թվականների ՄԺԾԾ հայտի կազմման համար: Իսկ մինչև 2018 թվականի հուլիսի 10-ը ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվելիք ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով յուրաքանչյուր պետական կառավարման մարմնի գծով կսահմանվեն ֆինանսավորման վերջնական կողմնորոշիչ չափաքանակներ, որոնք էլ ուղեցույց կհանդիսանան ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի պատրաստման համար: Պետական մարմիններն իրենց 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը պետք է կազմեն նշված բյուջետային ծախսերի ֆինանսավորման վերջնական կողմնորոշիչ չափաքանակների շրջանակներում:

Սույն մեթոդական ցուցումները հանդիսանում են միասնական ուղեցույց պետական մարմինների համար թե իրենց 2019-2021 թվականների ՄԺԾԾ հայտերի, և թե 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման համար:

Մեթոդական ցուցումները բաղկացած են հետևյալ չորս մասերից

- **Մաս 1** – նկարագրվում են ՀՀ 2019-2021 թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծերի կազմման գործընթացներին վերաբերող ընդհանուր բնույթի հիմնական տեղեկությունները, մասնավորապես՝ ՀՀ 2019-2021 թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի գծով որոշումները և որոշումներ կայացնողները, ՀՀ 2019-2021 թվականների ՄԺԾԾ և 2019 թվականի բյուջետային գործընթացի հանգուցային ժամկետները և պետական մարմիններին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար:
- **Մաս 2.**– տրվում են 2019-2021 թվականների ՄԺԾԾ հայտերի կազմման առանձին ցուցումներ՝ ընդհանուր դրույթների և վերջինիս կից ՄԺԾԾ հայտի օրինակելի ձևի տեսքով :
- **Մաս 3.**– տրվում են 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման առանձին ցուցումներ՝ ընդհանուր դրույթների և վերջինիս կից բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակելի ձևի տեսքով:
- **Մաս 4.**– բերվում են 2019-2021 թվականների ՄԺԾԾ հայտերի և 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ցուցումների հավելվածներ:

Ներքին գործավարության էլեկտրոնային համակարգ չունեցող պետական մարմիններին տրամադրվում է սույն մեթոդական ցուցումները և նրան կից բոլոր հավելվածներն ու հաշվարկման ձևաչափերի ֆայլերը պարունակող էլեկտրոնային կրիչ (CD): Վերջիններս զետեղված են նաև ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Մեթոդական ցուցումների կամ բյուջետային գործընթացում ծագած՝ պետական մարմնի նկատմամբ առաջադրվող պահանջներին վերաբերող ցանկացած հարց հայտատուները կարող են ուղղել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման և

բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչություններ՝
(հեռ.՝ 011-800135, 011-800136, 011-800137, 011-800138, 011-800139, 011-800226,
011-800228, 011-800230, 011-800231, 011-800232, 011-800238, 011-800239, 011-800240, 011-
800241, 011-800242, 011-800243, 011-800244, 011-800245, 011-800246,
011-800247, 011-800252) համապատասխան պատասխանատու մասնագետներին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՒՆՆԵՐ ՆԱԽՈՐԴ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2017-2022թթ գործունեության ծրագրով նախատեսված է 2019թ. ՀՀ պետական բյուջեի և հաջորդ տարիների նախագծերը կազմել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել ծրագրային բյուջետավորման (ԾԲ) ձևաչափով:

Այդ կապակցությամբ, ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի 2019թ. N 311-Ա հրամանով հաստատվել են ԾԲ մեթոդաբանությունը սահմանող մի շարք մեթոդական ձեռնարկներ.(հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում):

- ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկը,
- ԾԲ ձևաչափով ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման մեթոդական ձեռնարկը,
- ԾԲ ձևաչափով պաշտոնապես հաստատվող և հրապարակվող բյուջետային փաստաթղթերի ձևաչափերը և դրանցում տեղեկատվության ներկայացման պահանջները,
- Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցը,
- ԾԲ տեսանկյունից ոլորտային ռազմավարություններին ներկայացվող հիմնական պահանջների վերբերյալ ուղեցույցները:

Նշված մեթոդական ձեռնարկները հանդիսանում են սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մասը, որոնք մանրամասնորեն սահմանում և հստակեցնում են ԾԲ մեթոդաբանության և դրա կիրառության հետ կապված հարցերը:

Սույն մեթոդական ցուցումների հիման վրա իրենց ՄԺԾԾ և բյուջետային հայտերը կազմելիս ՀՀ պետական մարմինները պետք է առաջնորդվեն նաև վերոհիշյալ ձեռնարկների պահանջներով, որի կապակցությամբ, բոլոր անհրաժեշտ դեպքերում սույն մեթոդական ցուցումները պարունակում են հղումներ համապատասխան մեթոդական ձեռնարկների վրա:

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հաստատված ձեռնարկներով որոշակի փոփոխություններ են կատարվել ԾԲ բնագավառում ներկայումս կիրառվող գործնական մոտեցումներում, որոնք պետք է հաշվի առնել հայտերում ԾԲ ձևաչափով տեղեկատվությունը ներկայացնելիս: Մասնավորապես, վերանայվել է ԾԲ ձևաչափով ներկայացվող ծրագրերի կառուցվածքը: Եթե նախկինում այդ ծրագրերը կարող էին պարունակել մեկից ավելի գերատեսչության կողմից իրականացվող միջոցառումներ,

ապա նոր մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ծրագիր պետք է պարունակի միայն մեկ գերատեսչության կողմից իրականացվող միջոցառումներ («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2 հոդվածի 17.1 մաս): Այսինքն, յուրաքանչյուր ծախսային ծրագրի իրականացման համար այսուհետ պետք է պատասխանատու լինի միայն մեկ կոնկրետ գերատեսչություն:

ԾԲ պահանջներին համապատասխանող ծախսային ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների ցանկի նախնական տարբերակն, ըստ պատասխանատու պետական մարմինների և ծրագրային դասակարգման դասիչների պետական մարմիններին ՀՀ ՖՆ կողմից կտրամադրվի լրացուցիչ:

Վերոհիշյալ փոփոխություններով պայմանավորված, վերանայվել են ԾԲ ձևաչափով բյուջետային տեղեկատվության ներկայացման բոլոր հիմնական ձևաչափերը, որոնք կառուցվածքային և բովանդակային առումով համապատասխանեցվել են ԾԲ ձեռնարկների պահանջներին:

Փոփոխություններ են կատարվել նաև գոյություն ունեցող պարտավորությունների և նոր նախաձեռնությունների ծախսակազմումների համար կիրառվող ձևաչափերում: Մասավորապես, վերանայվել են գործոնային վերլուծությունների համար նախկինում կիրառվող բոլոր աղյուսակային ձևաչափերը, որոնք բովանդակային առումով համապատասխանեցվել են բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցների պահանջներին:

Սույն մեթոդական ցուցումներով պահանջվում է նաև որ բոլոր այն դեպքում, երբ հայտի շրջանակներում նախատեսվում են փոփոխություններ այն բյուջետային ծրագրերի/միջոցառումների հիմնական բաղադրիչներում, որոնց համար հայտի ներկայացման պահին առկա է սահմանված կարգով մշակված ծրագրի անձնագիր (նկարագիր), ապա հայտին կից ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն նաև առաջարկություններ բյուջետային ծրագրերի անձնագրերում փոփոխությունների վերաբերյալ:

ՄԱՍ 1. ՀՀ 2019-2021 ԹԹ. ՄԺԾԾ ԵՎ ՀՀ 2019 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀՀ 2019-2021 թթ. ՄԺԾԾ որոշումները

ՀՀ 2019-2021 թվականների ՄԺԾԾ մշակման գործընթացը տրամադրում է մի մեխանիզմ, որով ՀՀ կառավարությունը կկայացնի ռազմավարական որոշումներ իր հարկաբյուջետային քաղաքականության մասին: Մասնավորապես, ՄԺԾԾ գործընթացի արդյունքում կսահմանվեն

- **Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները կամ նպատակները** այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են պետական բյուջեի եկամուտները, ծախսերը, պակասուրդի մակարդակը և պետական պարտքը:

- **Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները.** հաշվի առնելով երկարաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի անհրաժեշտությունը, ՀՀ կառավարությունը կորոշի ընդհանուր ծախսերի մակարդակը (և, հետևաբար, պա-

կասուրդը) առաջիկա բյուջետային տարվա և ՄԺԾԾ ժամանակահատվածի հաջորդ երկու տարիների համար:

- **Ռազմավարական ծախսային գերակայությունները.** ՄԺԾԾ գործընթացում ոլորտային և ծախսային գերակայությունների սահմանումը թույլ կտա, որպեսզի ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի նախապատրաստման գործընթացն ուղղորդվի համապատասխան մշակված քաղաքականությունների դաշտ:

- **Պետական մարմինների կողմից իրականացվող քաղաքականության նպատակները և դրանց իրագործման համար կիրառվող ռազմավարությունը.** ՄԺԾԾ գործընթացը հնարավորություն է տալիս պետական մարմիններին ներգրավվել պետության ռազմավարական նպատակների և ծրագրերի մշակման գործընթացում:

1.2. ՄԺԾԾ որոշումներ կայացնողները

ՀՀ վարչապետի 2002 թվականի հունիսի 7-ի N 346-Ն որոշմամբ ստեղծվել են ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգող և ղեկավարող մարմինները՝ Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդը (ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդ) և նշված ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբը (ՄԺԾԾ համակարգող խումբ), որոնք՝ համաձայն ՀՀ վարչապետի Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի, շարունակելու են իրենց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում նաև ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման ժամանակահատվածում:

▪ **ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդն** ապահովում է ռազմավարական որոշումների կայացումը և ՄԺԾԾ մշակման գործընթացի վերահսկողությունը,

▪ **ՄԺԾԾ համակարգող խումբն** ապահովում է ՄԺԾԾ մշակման աշխատանքների համակարգումը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի և համակարգող խմբի կազմերը (ՀՀ վարչապետի 2002 թվականի հունիսի 7-ի N 346-Ն որոշում՝ հաշվի առած ՀՀ վարչապետի 2004 թվականի դեկտեմբերի 2-ի N 790-Ն, 2007 թվականի դեկտեմբերի 17-ի N 888-Ն և 2008 թվականի դեկտեմբերի 17-ի N 1033-Ն որոշումներով կատարված փոփոխությունները):

Աղյուսակ.- ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի և համակարգող խմբի կազմերը

Հանձնախմբի անվանումը	Կազմը
ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ	ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ) ՀՀ ֆինանսների նախարար (խորհրդի նախագահի տեղակալ) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար

	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ (համաձայնությամբ) ՀՀ առողջապահության նախարար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար ՀՀ կրթության և գիտության նախարար ՀՀ պաշտպանության նախարար ՀՀ մշակույթի նախարար ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ
ՄԺԾԾ մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ (խմբի ղեկավար) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նազահի տեղակալ Նվիրատու կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ)

ՄԺԾԾ բարձրագույն խորհուրդը ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում կկայացնի առանցքային որոշումներ՝ հիմնվելով ՄԺԾԾ համակարգող խմբի առաջարկությունների վրա:

Միջնաժամկետ քաղաքականության հիմնախնդիրները ըստ ծրագրերի համակարգված ձևով ամփոփելու և ներկայացնելու նպատակով բյուջետային գործընթացի 1-ին փուլում՝ բյուջետային գործընթացում ընդգրկված բոլոր պետական մարմինները դասակարգվել են երեք խմբի.

- 1) Տվյալ ոլորտի աշխատանքների համակարգման համար պատասխանատու գործադիր իշխանության հանրապետական մարմին (այսուհետ՝ Գլխադասային մարմին),
 - 2) գլխադասային մարմին ունեցող ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմիններ,
 - 3) գլխադասային մարմիններ չունեցող ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմիններ:
- Գլխադասային մարմինների մարմինների ցանկը ներկայացված է ստորև.

Ց Ա Ն Կ

Գլխադասային մարմինների

Գործառույթ	Ոլորտային պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմիններ
Պաշտպանություն	«Վաշտպանության նախարարություն»
Հասարակական կարգի պահպանություն	«Վառավարությանն առընթեր ոստիկանություն»
Ազգային անվտանգություն	«Վառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն»
Արտակարգ իրավիճակներ	«Վարտակարգ իրավիճակների նախարարություն»
Կրթություն և գիտություն	«Վկրթության և գիտության նախարարություն»
Հայաստան-սփյուռք հարաբերություններ	«ՎՍփյուռքի նախարարություն»
Առողջապահություն	«Վառողջապահության նախարարություն»
Սոցիալական պաշտպանություն	«Վաշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն»
Մշակույթ, տեղեկատվություն, հրատարակչություն	«Վմշակույթի նախարարություն»
Բնակարանային շինարարություն, քաղաքաշինություն	«Վկառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե»
Վառելիք, էներգետիկա, բնական պաշարներ և ջրային տնտեսություն	«Վէներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն»
Գյուղատնտեսություն	«Վգյուղատնտեսության նախարարություն»
Շրջակա միջավայրի պաշտպանություն, անտառային տնտեսություն	«Վբնապահության նախարարություն»
Տրանսպորտ, կապ և ճանապարհային տնտեսություն	«Վտրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն»
Սպորտի և երիտասարդույան հարցեր	«Վսպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն»
Տարածքային կառավարում	«Վտարածքային կառավարման և զարգացման նախարարություն»
Արտաքին հարաբերություններ	«Վարտաքին գործերի նախարարություն»
Արդարադատություն	«Վարդարադատության նախարարություն»
Տնտեսական զարգացում և ներդրումներ	«Վտնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն»

1.3. «Վ2019թ. բյուջետային գործընթացի ժամանակացույցի ամփոփ նկարագիրը, պետական մարմիններին ներկայացվող հիմնական պահանջները և առանցքային ժամկետները»

Ինչպես արդեն նշվել է, «Վ2019 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար սահմանվել է իրականացվելիք աշխատանքների մեկ միասնական ժամանակացույց, 2019-2021 ՄԺԾԾ և 2019 բյուջետային հայտերի կազմման մեթոդական ցուցումներ

որում միաժամանակ ներառվել են ինչպես գործընթացի 1-ին փուլի՝ ՀՀ 2019-2021 թվականների ՄԺԾՍ մշակման, այնպես էլ 2-րդ փուլի՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները:

ՄԺԾՍ մշակման փուլում Գլխադասային մարմինները պետք է ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնեն իրենց մարմնի, ինչպես նաև առանձին՝ տվյալ ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմինների և ամփոփ ՄԺԾՍ հայտերը և պետք է համակարգեն այս գործընթացն իրենց ծրագրերի իրականացմանը մասնակից տվյալ ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմինների հետ:

գլխադասային մարմին ունեցող ոլորտում ծրագրեր իրականացնող պետական մարմինները, որոնք ունեն, իրենց ՄԺԾՍ հայտերը պետք է ներկայացնեն համապատասխան Գլխադասային մարմնին և պետք է մասնակցեն իրենց և Գլխադասային մարմնի միջև՝ վերջինիս կողմից սահմանվող կարգով և ժամկետներում տեղի ունեցող քննարկումներին:

Եթե պետական մարմինները մասնակցում են Գլխադասային մարմիններ ունեցող մի քանի ոլորտներում իրականացվող ծրագրերի, ապա նրանք պետք է յուրաքանչյուր ծրագրի համար առանձին հայտ ներկայացնեն համապատասխան Գլխադասային մարմնին՝ վերջինիս կողմից սահմանվող կարգով և ժամկետներում:

Գլխադասային մարմիններ չունեցող ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմինները, պետք է իրենց ՄԺԾՍ հայտերը ներկայացնեն ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ 2019 թվականի բյուջետային գործընթացի մասնակից բոլոր Գլխադասային և գլխադասային մարմիններ չունեցող ոլորտներում ծրագրեր իրականացնող պետական մարմինները ՄԺԾՍ գործընթացի շրջանակներում հիմք ընդունելով ՄԺԾՍ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից հաստատված ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2020 թթ. ճշգրտված և 2021 թ. կողմնորոշիչ չափաքանակները, իրենց կողմից իրականացվող ծրագրերի 2019-2021 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերը իսկ այնուհետև՝ նաև ՄԺԾՍ ավարտուն տեսքի բերված հայտերը (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2019-2021 թթ պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, պետք մշակեն և ներկայացնեն ՀՀ ֆինանսների նախարարություն: Պետական մարմինների ՄԺԾՍ ավարտուն տեսքի բերված հայտերը հիմք կծառայեն ՀՀ 2019-2021 թթ ՄԺԾՍ վերջնական փաստաթղթի՝ ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մասի կազմման համար: Ծախսային քաղաքականության ռազմավարությունը ներկայացնող մասում կլինի նաև յուրաքանչյուր ոլորտին վերաբերող բաժին: Պետական մարմիններից պահանջվում է պատրաստել ծախսա-

յին քաղաքականության ռազմավարության՝ իրենց ոլորտին վերաբերող բաժինը, ապահովելով ողջ տեղեկատվության ճշգրտությունը:

ՄԺԾԾ գործընթացի շրջանակներում պետական բոլոր մարմինների կողմից իրականացվելիք աշխատանքների կատարման կարևոր ժամկետները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ.- ՀՀ 2019 թվականի բյուջետային գործընթացում պետական մարմինների համար կարևոր ժամկետները

Պետական մարմինների կողմից պատրաստվող փաստաթղթերը	Կատարման համար սահմանված ժամկետը
Պետական կառավարման մարմինների կողմից ՄԺԾԾ-ի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումների ներկայացում	մինչև 2018 թվականի մարտի 1-ը
ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից մինչև 2018 թվականի մայիսի 18-ը հաստատված ՀՀ պետական բյուջեներից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2020թթ ճշգրտված և 2021թ. կողմնորոշիչ չափաքանակների հիման վրա գլխադասային մարմիններ չունեցող հայտատու մարմինների կողմից իրենց 2019-2021 թթ. ՄԺԾԾ հայտերի (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2019-2021թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները) մշակում և ներկայացում ՖՆ	մինչև 2018 թվականի մայիսի 25 -ը
ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից մինչև 2018 թվականի մայիսի 18-ը հաստատված ՀՀ պետական բյուջեներից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2020թթ ճշգրտված և 2021թ. կողմնորոշիչ չափաքանակների հիման վրա Գլխադասային մարմինները, իրենց 2019-2021 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերի (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2019-2021թթ. պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, ընդ որում, ինչպես ամփոփ, այնպես էլ՝ ըստ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմինների) մշակում և ներկայացում ՖՆ	մինչև 2018 թվականի հունիսի 1-ը
Հայտատու մարմինների հետ ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)	մինչև 2018 թվականի հունիսի 15-ը
ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկումների արդյունքներով ՀՀ պետական բյուջեներից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2020թթ ճշգրտված և 2021թ. կողմնորոշիչ չափաքանակների հիման վրա գլխադասային մարմիններ չունեցող հայտատու մարմինների կողմից ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾԾ-ի իրենց ծրագրերի նախագծերի (ծախսային ռազմավարության) մշակելը և ներկայացնելը ՀՀ ՖՆ	մինչև 2018 թվականի հունիսի 20 -ը
ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկման արդյունքներով Գլխադասային մարմինները ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾԾ-ի իրենց ծրագրերի նախագծերի (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմինների ծախսերի 2019-2021թթ ֆինանսավորման չափաքանակների վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ ՖՆ	մինչև 2018թվականի հունիսի 22-ը

<p>Ոլորտային բյուջետային գլխավոր կարգադրիչները (ԲԳԿ)¹ (անհրաժեշտության դեպքում քննարկելով տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու մարմինների հետ մեթոդական ցուցումների համաձայն 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը (ներառյալ առանձին՝ տվյալ ոլորտում գլխադասային չհանդիսացող հայտատու յուրաքանչյուր մարմնի համար և ամփոփ, ինչպես նաև տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) կազմում և ներկայացում ՀՀ ՖՆ</p>	<p>մինչև 2018 թվականի օգոստոսի 6-ը</p>
---	--

1.4 Հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների գծով ծախսերի հաշվարկներն իրականացնելիս Հայտատուները պետք է առաջնորդվեն սույն ցուցումների Հա-

¹ Գլխադասային մարմին

վելված N 14-ում բերված իրավական հիմքերով և դրանք կատարեն վերջիններիս խիստ համապատասխան:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով:

Ընդ որում, ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ ներկայացնելիս անհրաժեշտ է վերջիններս ներկայացնել Դաս/Կատեգորիա/Խումբ/Սինթետիկ մակարդակով:

ՄԱՍ 2. 2019-2021 ԹԹ. ՄԺԾԾ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՄԺԾԾ հայտի հիմնական նպատակն է ներկայացնել պետական մարմնի համակարգի (բնագավառի) ծախսային ռազմավարությունը հաջորդ երեք տարվա համար: Տվյալ ռազմավարությունը ներառում է միջնաժամկետ հատվածում նախատեսված ծրագրերը և միջոցառումները, և թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և նպատակների իրագործմանը: ՄԺԾԾ հայտում պետք է ներկայացնել նաև նախատեսված ծրագրերի և միջոցառումների ֆինանսական գնահատականը և հիմնավորել դրանք:

Պետական մարմնի ՄԺԾԾ հայտը (ինչպես նախնական, այնպես էլ ավարտուն տեսքի բերված) պետք է հաստատի (ստորագրի) պետական մարմնի ղեկավարը:

Ստորև ներկայացված է ՄԺԾԾ հայտի օրինակելի ձևը, որում բացատրվում է, թե ինչ է անհրաժեշտ ներկայացնել վերջինիս յուրաքանչյուր բաժնում:

ՄԺԾԾ հայտի շրջանակներում բյուջետային ծրագրերը և միջոցառումները, ինչպես նաև դրանց գծով արդյունքային ցուցանիշները սահմանելիս, անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների սահմանման», ինչպես նաև «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկներով, որոնք հաստատվել են ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի N 311-Ա հրամանով:

Միաժամանակ, ՄԺԾԾ հայտի շրջանակներում բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսակազմումներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով»² իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ համապատասխան մանրամասն ուղեցույցների պահանջներով:

□ ² ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի N 311-Ա հրաման

Այն դեպքում, երբ ՄԺԾԾ հայտի շրջանակներում նախատեսվում են փոփոխություններ այն բյուջետային ծրագրերի/միջոցառումների հիմնական բաղադրիչներում, որոնց համար հայտի ներկայացման պահին առկա է սահմանված կարգով մշակված ծրագրի անձնագիր (նկարագիր), ապա հայտին կից ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն նաև առաջարկություններ բյուջետային ծրագրերի անձնագրերում փոփոխությունների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ: Բյուջետային ծրագրի անձնագրի (նկարագրի) օրինակելի ձևը և դրան ներկայացվող պահանջները սահմանվում են սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջեարվորման ձևաչափով բյուջեարային ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկով»:

<Լրացնել պետական մարմնի անվանումը>³

2019-2021

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՀԱՅՏ

³ Փաստաթղթի լրացման համար անհրաժեշտ ցուցումները ներկայացված են շեղադրանքով: Ցուցումները չպետք է ներառվեն ներկայացվող ՄԺԾԾ հայտում:

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Պետական մարմնի առաքելությունը և իրականացվող ծրագրերը

Ներկայացվում է հայրը լրացնող պետական մարմնի առաքելությունը և այդ առաքելության շրջանակներում վերջինիս պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերի ընդհանուր համառոտ նկարագիրը:

Առաքելությունը նկարագրելիս այն անհրաժեշտ է ներկայացնել հնարավորինս հակիրճ տեսքով՝ հղում կատարելով առաքելությունը սահմանող համապատասխան օրենսդրական և կանոնադրական փաստաթղթերին:

Պետական մարմնի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի համառոտ նկարագիրը պետք է պարունակի պետական մարմնի առաքելության շրջանակներում վերջինիս պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրեր անվանումների, դրանց հիմնական նպատակների և այդ ծրագրերի շրջանակներում հանրությանը տրամադրվող հիմնական միջոցառումների (օրինակ՝ ծառայությունների), ինչպես նաև դրանց գծով հիմնական շահառուների համառոտ նկարագրությունը:

Բյուջետային ծրագրերի վերաբերյալ վերոհիշյալ տեղեկատվությունը ներկայացնելիս, անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան ծրագրերի անձնագրերին, իսկ նման անձնագրերի բացակայության դեպքում՝ «Օրենսդրական, ռազմավարական կամ քաղաքական համապատասխան փաստաթղթերին, որոնցով հիմնավորվում է համապատասխան ծրագրերի և միջոցառումների իրականացումը: Բյուջետային ծրագրերը ներկայացնելիս անհրաժեշտ է հիմք ընդունել 2018-2020թթ. ՄԺԾԾ-ով և 2018թ. պետական բյուջեով տվյալ պետական մարմնի գծով հաստատված բյուջետային ծրագրերը:

Այն դեպքերում, երբ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով «Կառավարության պարտավորություններից բացի, սահմանված են նաև պարտավորություններ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) համար, ապա անհրաժեշտ է պարզաբանել «Կառավարության և ՏԻՄ պարտավորությունների փարբերությունները:

Ծրագրերի և իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփել ստորև բերված աղյուսակի տեսքով: Աղյուսակում ծառայությունների կամ շահառուների մասին տեղեկատվությունը պետք է ներկայացնել ընդհանրացված (խմբավորված) տեսքով, արտացոլելով օրենսդրական, քաղաքական և ռազմավարական փաստաթղթերում ամրագրված՝ հանրության առջև «Կառավարության ստանձնած պարտավորությունները:

Ծրագրի կողմ և անվանումը	Ծրագրի նպատակը	Հիմնական միջոցառումների (ծառայությունների) շրջանակը ⁴	Հիմնական շահառուների շրջանակը	Հղումներ և պարզաբանումներ	Կապը առաքելության հետ
				
				

⁴ Անհրաժեշտություն չկա մանրակրկիտ թվարկել ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները: Պարտադիր չէ, որ միջոցառումների (օրինակ՝ մատուցվող ծառայությունների) խմբավորումը համընկնի ծրագրային խմբավորման հետ, հնարավորության դեպքում ծառայությունները կարելի է խմբավորել ավելի ընդհանրացրած մակարդակով:

1.2. Վերջին երեք տարիների զարգացման միտումները

Ներկայացնել տվյալ պետական մարմնի պատասխանատվությամբ իրականացվող բոլոր ծրագրերի գծով առնվազն վերջին երեք տարիների (2016–2018թթ.) զարգացման միտումները ինչպես ոչ ֆինանսական, այնպես էլ ֆինանսական ցուցանիշների մակարդակով:

Մասնավորապես անհրաժեշտ է ներկայացնել առանցքային փոփոխությունները ծրագրերի շրջանակներում պետության կողմից իրականացվող հիմնական միջամտությունների (օրինակ՝ մատուցվող ծառայությունների) կառուցվածքում, ինչպես նաև հիմնական ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկան վերջին երեք տարիների համար (օրինակ՝ կիրառելով աճի տեմպեր) և դրանց բացատրությունները: Անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ (2016–2018թթ.) միտումների տարբերությունները դրանց նախորդող տարիների (օրինակ՝ 2014–2016թթ.) միտումներից, ինչպես նաև այդ տարբերությունների բացատրությունները:

Անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել նաև հիմնական միջոցառումների գծով առանցքային ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների պլան-փաստացի համադրումները, շեղումների դինամիկան և այդ շեղումների բացատրությունները:

Վերոհիշյալ վերլուծությունները պետք է լինեն հնարավորինս հակիրճ՝ շեշտադրումը դնելով առավելապես թվային գնահատականների վրա: Այդ առումով, անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն ծրագրերի/միջոցառումներին, որոնց գծով ՄԺԾԾ հայտի հետագա հարվածներում ներկայացվում են խնդիրներ և ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում են էական փոփոխություններ ինչպես դրանց իրականացման (մատուցման) ձևերում, այնպես էլ հիմնական ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների առումով:

1.3. Հիմնական խնդիրները

Թվարկել տվյալ պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ում առկա այն հիմնական խնդիրները, որոնց կարգավորման ուղղությամբ կոնկրետ գործողությունների/միջոցառումներ են նախատեսվում իրականացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում: Այսինքն, թվարկվող խնդիրների շարքում չպետք է ներառվեն այնպիսիները, որոնց կարգավորման/լուծման ուղղությամբ ՄԺԾԾ ժամանակահատվածում չեն նախատեսվում կոնկրետ միջոցառումների իրականացում:

Խնդիրներն անհրաժեշտ է հնարավորության սահմաններում խմբավորել ըստ համապատասխան բյուջետային ծրագրերի (վերջնական արդյունքների) և ներկայացնել թվային (քանակական) ցուցանիշների տեսքով: Միաժամանակ, անհրաժեշտ է բացատրել, թե ինչպես են ներկայացվող խնդիրները կապված ՀՀ գործող ռազմավարական փաստաթղթերում ամրագրված կոնկրետ տնտեսական և սոցիալական խնդիրների և նպատակների հետ:

Պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ում առկա հիմնական խնդիրներն անհրաժեշտ է ամփոփել ստորև բերված աղյուսակի տեսքով:

</>	Խնդրի նկարագրությունը	Առնչվող բյուջետային ծրագրի կոդը և անվանումը ⁵	Կապը ռազմավարական խնդիրների և նպատակների հետ
....			

⁵ Եթե ներկայացված խնդիրը առնչություն չունի պետական մարմնի կողմից իրականացվող որևէ բյուջետային ծրագրի հետ, ապա անհրաժեշտ է նշել այդ մասին՝ միաժամանակ ներկայացնելով համապատասխան բացատրություններ

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ներկայացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով հիմնական նպատակները: Նպատակները սահմանելիս անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ այդ նպատակները պետք է փոխկապակցվեն համապատասխան բյուջետային ծրագրերի նպատակների հետ և հնարավորինս ուղղված լինեն սույն ցուցումների 1.3 կետին համապատասխան բացահայտված խնդիրների լուծմանը: Այդ առումով, նպատակները պետք է բխեն նաև ՀՀ կառավարության ընդհանուր նպատակներից և լինեն շարունակական ու կայուն՝ առնվազն միջնաժամկետ հատվածում:

Նպատակների ձևակերպումը պետք է լինի հստակ և հնարավորինս սեղմ՝ 1-2 նախադասությամբ: Հնարավորության սահմաններում նպատակները պետք է ներկայացվեն թվայնացված տեսքով՝ դրանց համար կիրառելով համապատասխան արդյունքային ցուցանիշներ:

Նպատակներն անհրաժեշտ է ներկայացնել ըստ դրանց գերակայությունների նվազման հաջորդականության: Նպատակների միջև գերակայությունների սահմանումը պետք է հնարավորություն տա եզրակացություններ կատարելու «նպատակներ – գերակայություններ – ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ» կապի շուրջ: Մասնավորապես, գերակայությունները պետք է սահմանվեն այնպես, որ հնարավոր լինի հիմնավորել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ՄԺԾԾ ժամանակահատվածում կանխատեսվող միտումը: Այսինքն, նպատակների միջև գերակայությունները սահմանելիս դրանք պետք է հիմնավորվեն ըստ ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների գծով նախատեսվող միտումներով, որոնք իրենց հերթին պետք է հիմնավորվեն ՀՀ կառավարության տնտեսական և ծրագրային քաղաքականության միտումներով:

Գերակայությունների սահմանումը ենթադրում է, որ բնագավառին հարկացվելիք լրացուցիչ միջոցներն առաջին հերթին բաշխվելու են առավել գերակա նպատակների միջև: Այդ պարճառով նոր նախաձեռնությունների առաջարկման դեպքում, պետք է դրանք հիմնավորվեն սույն բաժնում նշված գերակայություններով:

Նպատակների և դրանց միջև գերակայությունների մասին տեղեկատվությունը ամփոփել ստորև ներկայացված աղյուսակում:

</<	Նպատակները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
....		

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Համառոտ նկարագրել, թե ինչպես են գոյություն ունեցող ծրագրերը/միջոցառումները (ծախսային պարտավորությունները) նպաստում ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը:

Սույն փաստաթղթի իմաստով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ են համարվում ՀՀ 2018-2020 թվականների պետական ՄԺԾԾ-ով կամ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ծախսային պարտավորությունները: Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները ճշգրտվում են միայն հաշվի առնելով հետևյալ գործոնները.

ա) ծախսային գործոնների մասին արված ենթադրություններում (կանխատեսվող ցուցանիշներում) հայտարարուից անկախ պատճառներով տեղի են ունեցած այնպիսի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում հաստատված ծրագրերի միջոցառումների (ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի փոփոխության, սակայն կարող են հանգեցնել ծախսային ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների փոփոխության:

բ) հայտարարուից անկախ պատճառով առաջացած այնպիսի գործոնները, որոնք հանգեցնում են ծրագրի միջոցառումների (ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի նվազեցմանը:

Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսակազմումներն անհրաժեշտ է ներկայացնել սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 1-ով սահմանված «Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ձևաչափերին» համապատասխան: Ծախսակազմումներն իրականացնելիս համապատասխան ծրագրի/միջոցառման գծով ծախսերի օբյեկտները, առնչվող ծախսերն ու դրանց դասակարգումները և ծախսերի վերգրման համար կիրառվող մոտեցումները սահմանելիս, ինչպես նաև ծախսակազմումների հետ կապված այլ բովանդակային հարցերում անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով» իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ համապատասխան մանրամասն ուղեցույցների պահանջներով: Ընդ որում, ծախսակազմումներն իրականացնելիս, առանձին ծախսատեսակների (օրինակ՝ աշխատանքի վարձատրության և այլն) գծով ծախսերի մանրամասն հաշվարկներն անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումներին առանձին առդրված ծախսերի հաշվարկների մանրամասն ձևերին համապատասխան:

Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 3-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Այդ ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջեային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների անհատկապես է ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածներ 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների համար նշված ձևաչափն օգտագործելիս դրանում չպետք է ներառվեն նոր նախաձեռնությունների գծով ծախսերը:

3.2. Նոր նախաձեռնությունները

Համառոտ նկարագրել ծախսային նոր նախաձեռնությունները և ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության, ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը:

Սույն փաստաթղթի իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային պարտավորությունները, որոնք հանգեցնում են ՀՀ 2018-2020 թվականների պետական ՄԺԾ-ի կամ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ծախսային պարտավորություններով սահմանված միջոցառումների (օրինակ՝ ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը՝ այսինքն, երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և/ կամ հաստատված ծառայությունները փարածել շահառուների նոր խմբերի վրա:

Անհրաժեշտ է բացատրել, թե նոր նախաձեռնությունների իրականացումը ինչ նոր բյուջեային ծրագիր (ծրագրեր) և միջոցառումներ կպահանջի կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով ինչ նոր շահառուների խմբեր կընդգրկի: Պետք է նկարագրել նաև, թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Եթե նոր նախաձեռնությունները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):

Այն դեպքերում, երբ նախատեսվում է նոր ծրագրի իրականացում (այլ ոչ թե գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնում), ապա անհրաժեշտ է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք հիմնավորում են փոփոխությունները:

Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:

Նոր նախաձեռնություններից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանձին հավելվածի տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 2-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

Նոր նախաձեռնությունների (ներառյալ այլընտրանքների) գծով ծախսակազմումներն անհրաժեշտ է իրականացնել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներին» համապատասխան: Մասնավորապես ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է հստակ ներկայացնել համապատասխան այլընտրանքներից յուրաքանչյուրի գծով ծախսերի օբյեկտները, առնչվող ծախսերն ու դրանց դասակարգումները և ծախսերի վերգրման համար կիրառվող մոտեցումները: Ծախսակազմման փաստաթղթերը/Ֆայերը պետք է հանդիսանան ՄԺԾ հայտի բաղկացուցիչ մասը և հայտի հետ միասին սահմանված կարգով ներայացվեն ՀՀ ՖՆ:

Պետք է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք ընկած են համապատասխան առաջարկների ֆինանսական գնահատականների հիմքում, ներկայացնել նաև համապատասխան հաշվարկներ, ինչպես նաև ներկայացնել նոր ծրագրերի/միջոցառումների իրականացման կամ շահառուների նոր խմբերի ներառման արդյունքում ակնկալվող

առավելությունները և օգուտները: Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:

Նոր նախաձեռնությունների գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում առաջարկվող ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 3-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի փնտրագիտական և գործառական դասակարգումների մանրամասների անհրաժեշտ է ներկայացնել՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածներ 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Նոր նախաձեռնությունների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսերը:

Անհրաժեշտ է թվարկել նոր նախաձեռնությունների ֆինանսավորման հավանական այլընտրանքային աղբյուրները՝ այլ աղբյուրներ կամ խնայողություններ այլ ծրագրերից: Ֆինանսավորման այլ հավանական աղբյուրի առկայության կամ այլ ծրագրերում խնայողություններ ակնկալելու դեպքում, այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ տեսքով ներկայացնել առանձին աղյուսակում՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 6-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համառոտ ներկայացնել պետական մարմնի, ինչպես նաև վերջինիս ենթակայությամբ գործող պետական կազմակերպությունների կողմից 2019-2021թթ. իրականացվելիք ֆինանսավորման գործունեության արդյունքում սպասվող եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 7-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԼՈՒՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նկարագրել ըստ մարզերի, թե ինչպես են բյուջետային ծրագրերը/միջոցառումները նպաստելու ՀՀ տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը, որքանով են համահունչ ՀՀ կառավարության որդեգրած զարգացման քաղաքականությանը: Առաջարկվող ծախսային ծրագրերի հատկացումները ներկայացնել նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով (Հավելված 8-ին համապատասխան), որոնց կից պետք է ներկայացվեն համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվություն:

6. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Համառոտ նկարագրել արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները և այդ ֆինանսական ռեսուրսների ստացման աղբյուրները (առանձին ցույց տալով նաև այդ ծրագրերի/միջոցառումների գծով ՀՀ կառավարության համաֆինանսավորման չափաքանակները): Այդ առումով, ի լրումն սույն օրինակելի ձևի 3, 4 և 5-րդ կետերով պահանջվող տեղեկատվության, այդ ծրագրերի/միջոցառումների վերաբերյալ

տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ ձևով ներկայացնել նաև սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 9-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

Ծրագրերի նկարագրությունները պետք է լինեն բովանդակային՝ համապատասխան հաշվարկներով հիմնավորված:

Բովանդակային բացատրագրերում առնվազն պետք է ներառվեն ծրագրերի գծով ըստ գնումների պլանի ընթացիկ (ԾԻԳ-երի պահպանման ծախսերի՝ ներառյալ հաստիքացուցակով նախատեսվող աշխատավարձի ֆոնդի և աշխատողների թվաքանակի, խորհրդարկական աշխատանքների և այլ ընթացիկ ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (այդ թվում՝ ըստ օբյեկտների շինարարության, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության և ապրանքների ձեռքբերման մրցույթների փուլերի, և այլ կապիտալ ծախսերի) ընթացքի և կանխատեսումների վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով տեղեկատվական և վերլուծական դրույթներն ըստ ծրագրերի բաղադրիչների, այդ թվում՝

ա/ շինարարական և այլ աշխատանքների գծով՝ իրականացվելիք աշխատանքներն ըստ օբյեկտների, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը, մրցույթի ընթացքը, կապալի պայմանագրի առկայությունը, շինարարական աշխատանքների ավարտը և կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունները,

բ/ ապրանքների և նյութերի ձեռքբերման գծով՝ ապրանքների տեսականին, անհրաժեշտությունը և նպատակը, ձեռքբերման մրցույթի ընթացքը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

գ/ տեխնիկական աջակցության և խորհրդատվության գծով՝ ձեռքբերման անհրաժեշտությունը և նպատակը, նախատեսված ծախսի հաշվարկ-հիմնավորումը, տեխնիկական առաջադրանքների (TOR-երի) առկայությունը, մրցույթի ընթացքը, ծառայության մատուցման ավարտը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

դ/ կառավարման կամ ԾԻԳ-երի պահպանման ծախսերի գծով՝ նախատեսված ծախսերի անհրաժեշտությունը, նպատակը, ուղղվածությունը և համապատասխան պարզաբանումները:

7. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՆԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացնել 2019-2021 թթ ժամանակահատվածի համար պետական մարմնի մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 10-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

8. ՄԺԾԾ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ներկայացնել հայրի հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց վերլուծությունը: Մասնավորապես ներկայացնել ՄԺԾԾ հայրի (ըստ առանձին ծրագրերի) հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված հիմնական ռիսկերը (օրինակ ծախսային գործոնների գծով չճշտված ենթադրություններ, կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի մակարդակի չճշտված կանխատեսումներ և այլն), որոնք կարող են բացասաբար ազդել ՄԺԾԾ հայրով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա:

Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա, ինչպես նաև այդ ռիսկերի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները: Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփել ստորև բերված աղյուսակում:

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ⁶	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները
...			

⁶ Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն

Բյուջետային ֆինանսավորման հայտի հիմնական նպատակն է ներկայացնել 2019 թվականի պետական բյուջեի շրջանակներում պետական մարմնի կողմից իրականացման ենթակա ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ մանրամասն հաշվարկներ: Բյուջետային ֆինանսավորման հայտը ներկայացնելիս պետք է ուղղորդվել ՀՀ 2019-2021 թվականների համար ՄԺԾԾ բարձրագույն խորհրդի կողմից սահմանված ծախսային ծրագրերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներով: Եթե 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտով 2019 թվականի համար առաջարկվող ծախսերը գերազանցում են ՀՀ 2019-2021 թվականների պետական ՄԺԾԾ-ով 2019 թվականի համար նախատեսված ծախսերի չափաքանակները, ապա պետք է դրանք հիմնավորել և ցույց տալ, թե ինչպես են նախատեսված ծրագրերը և միջոցառումները կապվում ՄԺԾԾ-ով հաստատված ծախսային ռազմավարության իրականացման հետ:

Պետական մարմնի 2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը (ինչպես նախնական, այնպես էլ ավարտուն տեսքի բերված) կազմվում և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում մեկ ամբողջական փաստաթղթի տեսքով՝ հայտատուի ղեկավարի կողմից ստորագրված ուղեկցող գրությամբ:

Ստորև ներկայացված է Բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակելի ձևը, որում բացատրվում է, թե ինչ է անհրաժեշտ ներկայացնել վերջինիս յուրաքանչյուր բաժնում:

Բյուջետային ֆինանսավորման հայտում ծրագրերը ձևակերպելիս պետք է առաջնորդվել ծրագրերի և միջոցառումների ձևակերպման մեթոդական ուղեցույցներով սահմանված սկզբունքներով և մոտեցումներով:

Հայտի շրջանակներում բյուջետային ծրագրերը և միջոցառումները, ինչպես նաև դրանց գծով արդյունքային ցուցանիշները սահմանելիս, անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների սահմանման», ինչպես նաև «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկներով:

Միաժամանակ, բյուջետային ֆինանսավորման հայտի շրջանակներում բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսակազմումներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով» իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ համապատասխան մանրամասն ուղեցույցների պահանջներով:

Այն դեպքում, երբ հայտի շրջանակներում նախատեսվում են փոփոխություններ այն բյուջետային ծրագրերի/միջոցառումների հիմնական բաղադրիչներում, որոնց համար հայտի ներկայացման պահին առկա է սահմանված կարգով մշակված ծրագրի անձնագիր (նկարագիր), ապա հայտին կից ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն նաև առաջարկություններ բյուջետային ծրագրերի անձնագրերում փոփոխությունների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ: Բյուջետային ծրագրի անձնագրի (նկարագրի) օրինակելի ձևը և դրան ներկայացվող պահանջները սահմանվում են սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկով»:

<Լրացնել պետական մարմնի անվանումը>⁷

2019

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

⁷ Փաստաթղթի լրացման համար անհրաժեշտ ցուցումները ներկայացված են շեղադրանքով: Ցուցումները չպետք է ներառվեն ներկայացվող ՄԺԾԾ հայտում:

1. 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ներկայացվում է հայտում ներառված ծրագրերի գծով պահանջվող ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ առանձին ծրագրերի: Յուրաքանչյուր ծրագրի գծով ներկայացվում են ինչպես գոյություն ունեցող պարտավորությունների, այնպես էլ նոր նախաձեռնությունների վերաբերյալ հաշվարկներ և հիմնավորումներ՝ ստորև ներկայացված ցուցումներին համապատասխան:

1.1 ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացվում է տեղեկատվություն հայտի շրջանակներում ներառված գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների (ծրագրերի/միջոցառումների) վերաբերյալ: Սույն ցուցումների իմաստով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ են համարվում ՀՀ 2019-2021 թվականների պետական ՄԺԾԾ-ով 2019 թվականի համար հաստատված ծախսային պարտավորությունները (ծրագրերը/միջոցառումները):

1.1.1 Գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ու հիմնավորումը

Ներկայացվում է ծրագրի գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների (ծրագրերի/միջոցառումների) հաշվարկն ու հիմնավորումն ըստ առանձին գործոնների:

Պետական մարմնի գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները 2019 թվականի համար կարող են ճշգրտվել՝ միայն հաշվի առնելով հետևյալ գործոնները.

ա) 2019-2021թթ. ՄԺԾԾ-ում ծախսային գործոնների մասին արված ենթադրություններում (կանխատեսվող ցուցանիշներում) հայտատուից անկախ պատճառներով տեղի ունեցած այնպիսի փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում ՀՀ 2019-2021 թվականների պետական ՄԺԾԾ-ով հաստատված ծրագրերի միջոցառումների (օրինակ՝ ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի փոփոխության, սակայն կարող են հանգեցնել ծախսային ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների փոփոխության:

բ) Հայտատուից անկախ պատճառով առաջացած այնպիսի գործոնները, որոնք հանգեցնում են ՀՀ 2019-2021 թվականների պետական ՄԺԾԾ-ով հաստատված միջոցառումների (ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի նվազեցմանը:

Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսերն ըստ առանձին ծրագրերի/միջոցառումների անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածով 1-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան: Ծախսակազմումներն իրականացնելիս համապատասխան ծրագրի/միջոցառման գծով ծախսերի օբյեկտները, առնչվող ծախսերն ու դրանց դասակարգումները և ծախսերի վերգրման համար կիրառվող մոտեցումները սահմանելիս, ինչպես նաև ծախսակազմումների հետ կապված այլ բովանդակային հարցերում անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով» իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ համապատասխան մանրամասն ուղեցույցների պահանջներով: Հավելված 1-ում ներկայացված ձևաչափերը 2019թ. բյուջետային ֆինանսավորման հայտի շրջանակներում լրացնելիս, լրացվում է միայն բազային և բյուջետավորվող փարվա վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ որպես բազային փարվա ցուցանիշներ դիտարկվում են 2019-2021 թթ. ՄԺԾԾ-ով 2019թ. համար հաստատված համապատասխան ցուցանիշները: Ընդ որում,

ծախսակազմումներն իրականացնելիս, առանձին ծախսաբեռներ (օրինակ՝ աշխատանքի վարձարության և այլն) գծով ծախսերի մանրամասն հաշվարկներն անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումներին առանձին առդրված (էլեկտրոնային կրիչով) ծախսերի հաշվարկների մանրամասն ձևերին համապատասխան:

Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով 2019թ իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 3-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան: Այդ ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգման անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածներ 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Հավելվածներ 3-ով, 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերը 2019թ. բյուջետային ֆինանսավորման հայտի շրջանակներում լրացնելիս, լրացվում է միայն բյուջետավորվող տարվա վերաբերյալ տեղեկատվությունը: Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների համար նշված ձևաչափն օգտագործելիս դրանում չպետք է ներառվեն նոր նախաձեռնությունների գծով ծախսերը:

Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով լրացուցիչ ֆինանսավորման (2019-2021թթ. ՄԺԾԾ-ով տվյալ ծրագրի գծով 2019 թվականի համար հաստատված չափաքանակներից ավելի) վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփ ներկայացնել՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 13-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

1.1.2 Գոյություն ունեցող պայմանական պարտավորությունները

Ծրագրի գծով գոյություն ունեցող պարտավորությունները ներկայացնելիս, եթե տվյալ պարտավորությունները ՀՀ 2019-2021 թթ. պետական ՄԺԾԾ-ում ներառվել են որպես նոր նախաձեռնություններ, ապա այդ մասին անհրաժեշտ է կատարել համապատասխան նշում: Ընդ որում, այն դեպքերում, երբ ՀՀ 2019-2021 թթ. պետական ՄԺԾԾ-ում հաստատված նոր նախաձեռնությունները նախատեսվել են նոր իրավական հիմքերի ստեղծման նախապայմանով, ինչպես նաև գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, որը սակայն պահանջում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա անհրաժեշտ է հայտում ներկայացնել բացատրություններ և հղումներ նշված նախապայմանների կատարման (առկայության) մասին:

1.2 ՆՈՐ ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկայացվում է տեղեկատվություն հայտի շրջանակներում ներառված նոր նախաձեռնությունների վերաբերյալ: Սույն ցուցումների իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային պարտավորությունները, որոնք հանգեցնում են ՀՀ 2019-2021 թթ. պետական ՄԺԾԾ-ով 2019 թվականի համար սահմանված ծրագրերի միջոցառումների (ծառայությունների) և /կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը, այսինքն՝ երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և կամ հաստատված ծառայությունները տարածել շահառուների նոր խմբերի վրա:

1.2.1 Նոր նախաձեռնությունների հաշվարկն ու հիմնավորումը

Ներկայացվում է նոր նախաձեռնությունների հաշվարկն ու հիմնավորումը: Անհրաժեշտ է բացատրել, թե նոր նախաձեռնությունների իրականացումը ինչ նոր բյուջեպային ծրագիր(ծրագրեր) և միջոցառումներ կպահանջի կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով ինչ նոր շահառուների խմբեր կընդգրկի: Պետք է նկարագրել նաև, թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ ՀՀ համապատասխան փաստաթղթերին): Եթե նոր նախաձեռնությունները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):

Այն դեպքերում, երբ նախատեսվում է նոր ծրագրի իրականացում (այլ ոչ թե գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնում), ապա անհրաժեշտ է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք հիմնավորում են փոփոխությունները:

Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա ներկայացնել համապատասխան բացատրությունները և հիմնավորումները:

Նոր նախաձեռնություններից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանձին հավելվածի տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 2-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

Նոր նախաձեռնությունների (ներառյալ այլընտրանքների) գծով ծախսակազմումներն անհրաժեշտ է իրականացնել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեպային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներին» համապատասխան:

Մասնավորապես ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է հստակ ներկայացնել համապատասխան այլընտրանքներից յուրաքանչյուրի գծով ծախսերի օբյեկտները, առնչվող ծախսերն ու դրանց դասակարգումները և ծախսերի վերգրման համար կիրառվող մոտեցումները: Ծախսակազմման փաստաթղթերը/Ֆայերը պետք է հանդիսանան բյուջեպային հայտի բաղկացուցիչ մասը և հայտի հետ միասին սահմանված կարգով ներկայացվեն ՀՀ ՖՆ:

Պետք է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք ընկած են համապատասխան առաջարկների ֆինանսական գնահատականների հիմքում, ինչպես նաև ներկայացնել նոր ծրագրերի/միջոցառումների իրականացման կամ շահառուների նոր խմբի ներառման արդյունքում ակնկալվող առավելությունները և օգուտները:

Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:

Նոր նախաձեռնությունների գծով բյուջեպային ժամանակահատվածում առաջարկվող ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 3-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Այդ ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջեպային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգման անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածներ 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Հավելվածներ 3-ով, 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերը 2019թ. բյուջեպային ֆինանսավորման հայտի շրջանակներում լրացնելիս, լրացվում է միայն բյուջեպային վերաբերյալ տեղեկատվությունը: Նոր նախաձեռնությունների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսերը:

Անհրաժեշտ է թվարկել նոր նախաձեռնությունների ֆինանսավորման հավանական այլընտրանքային աղբյուրները՝ այլ աղբյուրներ կամ խնայողություններ այլ ծրագրերից: Ֆինանսավորման այլ հավանական աղբյուրի առկայության կամ այլ ծրագրերում խնայողություններ ակնկալելու դեպքում, այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ տեսքով ներկայացնել առանձին աղյուսակում՝ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելված 6-ում ներկայացված աղյուսակի ձևաչափին համապատասխան:

2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տարածքային զարգացմանն առնչվող իրականացվելիք ծրագրերի գծով ներկայացնել սույն մեթոդական ցուցումների Մաս 2-ի (ՄԺԾԾ հայտի օրինակելի ձևի) 6-րդ կետում նշված ծրագրերի նկարագրությունը՝ 2019 թվականին վերաբերող թարմացված տեղեկատվությամբ:

3. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՅՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրերի գծով ներկայացնել նաև սույն մեթոդական ցուցումների Մաս 2-ի 7-րդ կետում նշված ծրագրերի նկարագրության բացատրագրի 2019 թվականին վերաբերող թարմացված տեղեկատվությունը:

Ի լրումն այդ տեղեկատվության, անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ ծրագրերն իրականացնող գրասենյակների (ԾԻԳ-երի) պահպանման ծախսերի նախահաշիվները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող ձևաչափերին համապատասխան, դրանց հաշվարկ-հիմնավորումներով:

Հաշվարկ-հիմնավորումներում առնվազն պետք է ներառվեն ծախսերի հաշվարկման գործող մեթոդաբանությամբ և նորմատիվներով կոնկրետ հաշվարկները և կանխատեսումների հիմքում դրված սցենարները՝ դրանց վրա ազդող գործոնային գնահատումներով և պարզաբանումներով՝ 2021/2020թթ. համադրմամբ և շեղումների դեպքում՝ համապատասխան պարզաբանումների ներկայացմամբ, այդ թվում՝

- աշխատողների թվաքանակը, ըստ պաշտոնների աշխատավարձի ամսեկան դրույքաչափերը և աշխատավարձի ֆոնդի հաշվարկը, համադրումը ընթացիկ տարվա ցուցանիշների հետ և փոխկապակցումը ծրագրի իրականացման ընթացքի հետ,
- ծառայությունների (գործառնական և բանկային, էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության, վարձակալության և այլն) ձեռքբերման ծախսերի հաշվարկը, համադրումները և փոփոխության դեպքում՝ դրանց գործոնային ազդեցության գնահատումները և պարզաբանումները,
- գործուղումների և շրջագայությունների (ներքին և արտաքին) ու գործուղվող անձանց քանակը, մեկնման վայրերը, անհրաժեշտությունը և նպատակը, գործուղման ծախսերի հաշվարկ-հիմնավորումները, համադրումները և կապը ծրագրի իրականացման տվյալ փուլի հետ,
- այլ պայմանագրային ծառայությունների (վարչական, համակարգչային, տեղեկատվական, մասնագիտական զարգացման, կառավարչական, ներկայացուցչական և այլն) անհրաժեշտությունը, պահանջվող գումարների հաշվարկները, մրցույթների ընթացքի, պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և պարզաբանումները,

- ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի գծով (շենքեր և մեքենաներ) հաշվարկները, նորոգման բնույթը և ծավալը, և այդ շրջանակներում կատարվող ձեռքբերումների հիմնավորումը,
- նյութերի (գրասենյակային, վերապատրաստման, տրանսպորտային) և այլ ծախսերի գծով հաշվարկները և համադրումները:

4. ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Ներկայացվում են բյուջետային հայրում ներառված ծրագրերի գծով ամփոփ ֆինանսական ցուցանիշները (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները)¹ սույն ցուցումների ՄԱՍ 4-ի հավելվածներ 11-ում և 12-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ներկայացնել բյուջետային հայրի հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց վերլուծությունը: Մասնավորապես ներկայացնել հայրի (ըստ առանձին ծրագրերի) հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված հիմնական ռիսկերը (օրինակ ծախսային գործոնների գծով չճշտված ենթադրություններ, կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի մակարդակի չճշտված կանխատեսումներ և այլն), որոնք կարող են բացասաբար ազդել հայրով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա:

Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա, ինչպես նաև այդ ռիսկերի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները: Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփել ստորև բերված աղյուսակում:

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ⁸	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները
			

⁸ Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն

ՄԱՍ 4. ՄԺԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ձևաչափ

Աղյուսակ 1. Ծրագիրը, միջոցառումը և ծախսերի օբյեկտները⁹

1. Ծրագիրը ¹⁰		<Լրացնել բյուջեպային ծրագրի կոդը և անվանումը>			
2. Միջոցառումը ¹		<Լրացնել բյուջեպային ծրագրի միջոցառման կոդը և անվանումը>			
3. Ծախսերի օբյեկտ(ներ)ը և դրանց հիերարխիան ¹¹					
3.1 Ծախսերի օբյեկտի հերթական համարը	3.2 Ծախսերի օբյեկտի անվանումը	3.3 Ծախսերի օբյեկտի տիպը	3.4 Ծախսերի օբյեկտի նկարագրությունը	3.5 Հիմնավորումներ	
.....					
3.6 Ծախսերի օբյեկտների հիերարխիան ¹		<Ծախսերի օբյեկտների միջև հիերարխիայի առկայության դեպքում նկարագրել այն՝ բացառելով, թե ինչպես են առանձին օբյեկտների գծով ծախսերը խմբավորվում միջոցառման գծով ընդհանուր ծախսերի ներքո> ¹²			

⁹ Բյուջեպային ծրագրի յուրաքանչյուր միջոցառման համար լրացվում է առանձին աղյուսակ

¹⁰ Բյուջեպային ծրագիրը կամ միջոցառումը սահմանելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջեպավորման ձևաչափով բյուջեպային ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկով»

¹¹ Ծախսերի օբյեկտները սահմանելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեպային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ Կրկյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում ծախսերի օբյեկտները սահմանելիս անհրաժեշտ է առաջնորդվել այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով: Եթե նախորդ բյուջեպային ժամանակահատվածի համեմատ փոփոխություններ են կատարվել ծախսերի օբյեկտների կազմում, ապա անհրաժեշտ է այդ մասին կատարել նշում:

¹² Եթե նախորդ բյուջեպային ժամանակահատվածի համեմատ փոփոխություններ են կատարվել ծախսերի օբյեկտների կազմում, ապա անհրաժեշտ է այդ մասին կատարել նշում՝ հիմնավորելով կատարված փոփոխությունը:

Աղյուսակ 2. Ծախսային գործոնները և դրանց ազդեցության մեխանիզմները¹³

Ծախսային գործոնը ¹⁴	Գործոնի տեսակը ¹⁵	Գործոնի հերթական համարը ¹⁶	Չափի միավորը ¹⁷	Ստանդարտի առկայությունը ¹⁸	Գործոնի մակարդակը ¹⁹				Հիմնավորումներ/Պատճառներ ²⁰	Ծախսերի մակարդակի վրա ազդեցության մեխանիզմը ²¹
					Բազային տարի	Բյուջետավորվող տարի (ԲՏ)	ԲՏ+1	ԲՏ+2		
Արդյունքային ցուցանիշներ՝										
	x			x						
	x			x						
.....	x			x						
Այլ գործոններ՝										

¹³ Աղյուսակը կարող է լրացվել ինչպես յուրաքանչյուր միջոցառման համար առանձին տեսքով, այնպես էլ կարող է լրացվել ընդհանրական աղյուսակ մեկից ավելի միջոցառումների համար: Մեկից ավելի միջոցառումների համար ընդհանրական աղյուսակի կիրառության դեպքում անհրաժեշտ է համապատասխան նշում կատարել աղյուսակի հղումների տեսքով: Աղյուսակը լրացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով»:

¹⁴ «Ծախսային գործոնը» սյունակում ներկայացվում են ծախսերի մակարդակի վրա ուղղակիորեն ազդող բոլոր այն գործոնները, որոնց ազդեցությամբ բյուջեավորվող տարում փոփոխություններ են կատարվում բազային տարվա ծախսերում: Ծախսային գործոնները պետք է ներառեն միայն այն գործոնները, որոնք անմիջականորեն ազդում են ռեսուրսների սպառման մակարդակի վրա կամ ներկայացնում են դրանց գների մակարդակը (օրինակ՝ մատակարարների քանակը, աշխատավարձի մակարդակը, նյութերի ձեռքբերման գները և այլն):

¹⁵ «Գործոնի տեսակը» սյունակում ներկայացվում են համապատասխան գործոնի տեսակը՝ գնային և ոչ գնային գործոններ:

¹⁶ «Գործոնի հերթական համարը» սյունակում լրացվում է համապատասխան գործոնի հերթական համարը՝ սկսած 1-ից:

¹⁷ «Չափի միավորը» արտահայտում է համապատասխան գործոնի ցուցանիշի չափման միավորը:

¹⁸ «Ստանդարտի առկայությունը» սյունակում լրացվում է «Այո» բառը համապատասխան ցուցանիշի հետ կապված ծախսային ստանդարտների (նորմատիվի) առկայության դեպքում և կատարվում է հղում այդ ստանդարտը սահմանող փաստաթղթին:

¹⁹ «Ծախսային գործոնի մակարդակը» սյունակում լրացվում են համապատասխան գործոնների մակարդակներն արտահայտող ցուցանիշները բազային և բյուջեավորվող տարիների համար: Տարեկան բյուջեային հայտի կազմման դեպքում լրացվում է միայն բյուջեավորվող առաջին տարվա (ԲՏ) սյունակը:

²⁰ «Հիմնավորում/պատճառներ» սյունակում լրացվում են բազային տարվա համեմատ գործոնի մակարդակների շեղումների պատճառներն ու հիմնավորումները: Ներկայացվում են հիմնավորումներ ծախսերի վրա ազդող գործոնների ընտրության և բյուջեավորվող տարիներից յուրաքանչյուրում բազային տարվա համեմատ կանխատեսվող փոփոխությունների վերաբերյալ: Հիմնավորումները ներկայացնելիս, անհրաժեշտ է ներկայացնել նաև այն ընդհանուր երևույթները/գործոնները/հանգամանքները, որոնք ազդել են համապատասխան գործոնների կանխատեսվող փոփոխությունների վրա (օրինակ պահանջարկի փոփոխություն, իրավական ակտերի ընդունում և այլն):

²¹ «Ծախսերի մակարդակի վրա ազդեցության մեխանիզմը» սյունակում նկարագրվում է, թե համապատասխան գործոնների մակարդակների փոփոխություններն ինչպես են ազդում ծախսերի մակարդակի փոփոխության վրա:

Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ

1. Պետական մարմինը
1.1 Պետական մարմնի անվանումը ³¹ _____
1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները ³² _____
2. Ծրագիրը ³³
2.1 Ծրագրի անվանումը ³⁴ _____
2.2 Ծրագրի կողը ³⁵ _____
2.3 <input type="checkbox"/> Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացատրություններ) ³⁶ _____
3. Միջոցառումը

³¹ Նշել նոր նախաձեռնությունը ներկայացնող պետական մարմնի անվանումը:

³² Նշվում է Կոմիտեի նոր նախաձեռնությանն առնչվող պետական մարմինների անվանումները՝ բացառությամբ հայտը ներկայացնող պետական մարմնի անվանման: Լրացվում է միայն այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը առնչվում է մեկից ավելի պետական մարմինների:

³³ Հավելվածի այս և հաջորդող հարվածներում ծրագրի և միջոցառման սահմանման, ինչպես նաև դրանց բաղադրիչների (նպատակներ, արդյունքային ցուցանիշներ և այլն) սահմանման/ նկարագրության համար անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջեավորման ձևաչափով բյուջեային ծրագրերի և միջոցառումների սահմանման» և «Ծրագրային բյուջեավորման ձևաչափով բյուջեային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկներով:

³⁴ Լրացվում է համապատասխան բյուջեային ծրագրի անվանումը, որի շրջանակներում նախատեսվում է համապատասխան նոր նախաձեռնության իրականացումը և ֆինանսավորումը: Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է նոր բյուջեային ծրագրի իրականացում, ապա անհրաժեշտ է ներքևում Նոր ծրագրի դիմացի վանդակում դնել <X> նշանը և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ նոր ծրագրի անհրաժեշտության վերաբերյալ:

³⁵ Լրացվում է համապատասխան ծրագրի քառանիշ կոդը: Նոր ծրագրերի դեպքում այս տողը չի լրացվում:

³⁶ Վանդակում դրվում է <X> նշանը, եթե նոր նախաձեռնությունը ենթադրում է նոր բյուջեային ծրագրի ներմուծում: Հակառակ դեպքում վանդակը թողնվում է դատարկ:

3.1 Միջոցառման անվանումը³⁷ _____

3.2 Միջոցառման կողմը³⁸ _____

3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)³⁹
 Ապրանք և ծառայություն Տրանսֆերտ Այլ (նկարագրություն) _____

3.4 Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացատրություններ)³⁹ _____

Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացատրություններ)⁴⁰ _____

4. Նպատակը⁴¹

³⁷ Լրացվում է համապատասխան ծրագրի միջոցառման անվանումը, որի շրջանակներում նախատեսվում է նոր նախաձեռնության իրականացումը և ֆինանսավորումը:

³⁸ Լրացվում է համապատասխան ծրագրի միջոցառման կողմը այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է գոյություն ունեցող ծառայությունների կամ տրանսֆերտների տրամադրում շահառուների նոր շրջանակի վրա: Նոր միջոցառման (օրինակ՝ նոր փոխի ծառայությունների մատուցում) դեպքում այս տողը չի լրացվում:

³⁹ Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է ծրագրի նոր միջոցառման ներմուծում, ապա անհրաժեշտ է Նոր միջոցառման դիմացի վանդակում դնել <X> նշանը և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ նոր միջոցառման անհրաժեշտության վերաբերյալ: Հակառակ դեպքում վանդակը թողնվում է դատարկ:

⁴⁰ Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (գոյություն ունեցող ծառայությունների կամ տրանսֆերտների տրամադրում շահառուների նոր շրջանակի վրա), ապա անհրաժեշտ է Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնման դիմացի վանդակում դնել <X> նշանը և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ միջոցառման ընդլայնման վերաբերյալ: Հակառակ դեպքում վանդակը թողնվում է դատարկ:

⁴¹ Համառոտ նկարագրել նոր նախաձեռնության նպատակը: Նպատակը սահմանելիս անհրաժեշտ է նկարագրել, թե ինչպես են առաջարկվող միջոցառումները նպաստելու պետական մարմնի առաքելության, ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը: Անհրաժեշտ է կատարել հղումներ ՀՀ կառավարության ընդհանուր նպատակներն ու գերակայությունները սահմանող համապատասխան փաստաթղթերին:

5. Նկարագրությունը ⁴²					
6. Սպասվող օգուտները ⁴³					
7. Միջոցառումը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները ⁴⁴					
8. Արդյունքային ցուցանիշները ⁴⁵	Չափի միավորը	Բյուջետավորվող տարի	Բյուջետավորվող տարի +1	Բյուջետավորվող տարի +2	Միջոցառման ավարտի փարթեթիվը ⁴⁶
.....					
Արդյունքային ցուցանիշի միավորի գծով ծախսերը ⁴⁷	ՀՀ դրամ	X	X	X	X
	X				
....	X				

⁴² Մանրամասն նկարագրել նոր նախաձեռնության շրջանակներում իրականացվող միջոցառումները (մատուցվող ծառայությունները, տրամադրվող տրանսֆերտները և այլն), դրանց գծով հիմնական շահառուների շրջանակները, միջոցառման իրագործման մեխանիզմները (ծառայությունների պատվիրակում ՊՈԱԿ-ներին, պետական կառավարչական հիմնարկների կարողությունների օգտագործում և այլն), պետական բյուջեից ֆինանսավորման մեխանիզմները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն, որն ընդհանուր առմամբ նկարագրում է նոր նախաձեռնությունը:

⁴³ Համառոտ նկարագրել նոր նախաձեռնության արդյունքում ակնկալվող հիմնական օգուտները: Օգուտները նկարագրելիս հնարավորության սահմաններում անհրաժեշտ է ներկայացնել այն հիմնական վերջնական արդյունքները, որոնց նպաստելու է միջոցառման իրականացումը:

⁴⁴ Համառոտ նկարագրել նոր նախաձեռնությունը չընդունելու և չֆինանսավորելու դեպքում հնարավոր հետևանքները և ծագող խնդիրները: Հնարավորության սահմաններում ներկայացնել թվային գնահատականներ: Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա ներկայացնել համապատասխան բացառություններ և հիմնավորումներ:

⁴⁵ Ներկայացվում են միջոցառման գծով ակնկալվող ոչ ֆինանսական արդյունքների կանխատեսումները:

⁴⁶ Ներկայացվում է միջոցառման կանխատեսվող ցուցանիշները միջոցառման ավարտի համար նախատեսված փարթեթի դրությամբ: Լրացվում է միայն այն միջոցառումների համար, որոնք ունեն հստակ կամ կանխատեսվող ավարտի ժամկետ:

⁴⁷ Ներկայացվում են միջոցառման գծով ակնկալվող ոչ ֆինանսական արդյունքների միավորի գծով ծախսերի կանխատեսումները:

9. Պահանջվող ռեսուրսները ⁴⁸	<< դրամ	Բյուջետավորվող տարի	Բյուջետավորվող տարի +1	Բյուջետավորվող տարի +2	Միջոցառման ավարտի տարեթիվը
	X				
....	X				
Ընդամենը	X				
10. Ֆինանսավորման աղբյուրը ⁴⁹	<< դրամ	Բյուջետավորվող տարի	Բյուջետավորվող տարի +1	Բյուջետավորվող տարի +2	Միջոցառման ավարտի տարեթիվը
Պետական բյուջե	X				
Այլ աղբյուրներ	X	X	X	X	X
	X				
...	X				
Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների գծով	X				
11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ					
Այլընտրանք # 2 (նվազագույն արդյունքների սցենար) ⁵⁰					
12. Միջոցառման իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ ⁵¹					

⁴⁸ Ներկայացվում է միջոցառման գծով սպառվող ռեսուրսների և դրանց գծով ծախսերի կանխատեսումները (ըստ բյուջեի մասերի և ծախսերի տեսակների) դասակարգման հոդվածների): Անհրաժեշտ է փաստաթղթի կցել ծախսակազմումների (ներառյալ հաշվարկների) բոլոր մանրամասները: Ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեի մասերի ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ ավելի ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով:

⁴⁹ Ներկայացվում է նոր նախաձեռնության գծով ծախսերի ֆինանսավորման ակնկալվող աղբյուրները:

⁵⁰ Ներկայացվում է համապատասխան միջոցառումը նվազագույն մակարդակում (այն մակարդակը, որից ներքև հնարավոր չի հասնել սահմանված նպատակներին) իրականացնելու այլընտրանքը: Մասնավորապես ներկայացվում է այդ այլընտրանքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների/ծախսերի և սպասվող արդյունքների գնահատականները, ինչպես նաև մյուս այլընտրանքների համեմատ առավելություններն ու թերությունները: Ներկայացվում է նաև հիմնավորումներ այն մասին, թե ինչու ավելի այլընտրանքը չի դիտարկվել որպես նախընտրելի այլընտրանք (նախընտրելի այլընտրանքի մանրամասները ներկայացվում են 8-ից 10-րդ կետերում): Այլընտրանքի ծախսակազմման (ներառյալ հաշվարկների) մանրամասները կցվում են: Ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեի մասերի ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ ավելի ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով: Այն դեպքում, երբ 8-ից 10-րդ կետերում ներկայացված առաջարկը (նախընտրելի այլընտրանքը) հանդիսանում է միջոցառումը նվազագույն մակարդակում իրականացնելու սցենարն, ապա 11-րդ կետում պարզապես կարգավորվում է նշում այդ մասին:

⁵¹ Ներկայացվում են միջոցառման իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքները: Վերջիններս կարող են վերաբերվել արտադրելու կամ գնելու այլընտրանքին, պետական կամ մասնավոր հարկաժամ պարտավորումներին, արտադրողական ժամանակային հորիզոնների այլընտրանքներին, ինչպես նաև սպասվող ռեսուրսների համախմբության այլընտրանքներին: Այլընտրանքներից յուրաքանչյուրի համար ներկայացվում է այդ այլընտրանքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների/ծախսերի և սպասվող արդյունքների գնահատականները, ինչպես նաև մյուս այլընտրանքների համեմատ առավելություններն ու թերությունները:

Այլընտրանք # 3

Այլընտրանք #

13.Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ⁵²

Այլընտրանքներից յուրաքանչյուրի մասով ներկայացվում են նաև հիմնավորումներ այն մասին, թե ինչու համապատասխան այլընտրանքները չեն դիտարկվել որպես նախընտրելի այլընտրանքներ (նախընտրելի այլընտրանքի մանրամասները ներկայացվում են 8-ից 10-րդ կետերում): Այլընտրանքների ծախսակազմման (ներառյալ հաշվարկների) մանրամասները կցվում են: Ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջեդային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ արվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով:

⁵² Ներկայացվում են նոր նախաձեռնության հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ:

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ⁵³

Պետական մարմնի անվանումը՝	<Լրացնել պետական մարմնի անվանումը>
---------------------------	------------------------------------

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա պետական մարմինը ձգտում է ներազդել՝
<Լրացնել պահանջվող տեղեկատվությունը>
2. Պետական մարմնի կողմից մատուցվելիք ծառայություններում կատարվող խոշոր փոփոխությունները, ներառյալ այն ծառայությունները, որոնք աջակցում են հիմնական գերակա վերջնական արդյունքների նվաճմանը՝
<Լրացնել պահանջվող տեղեկատվությունը>
3. Խոշոր փոփոխություններ պետական մարմնի ներսում ծառայությունների արտադրության և/կամ մատուցման ձևում (այսինքն՝ փոփոխություններ կառուցվածքներում, համակարգերում, գործընթացներում, կադրերում և կարողություններում, միջոցառումներում)՝
<Լրացնել պահանջվող տեղեկատվությունը>
4. Պետական մարմնի խոշոր ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, նախատեսված տվյալ ժամանակահատվածի համար, և թե ինչպես են այդ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կապված պլանավորված փոփոխությունների հետ՝
<Լրացնել պահանջվող տեղեկատվությունը>
5. Պետական մարմնի կողմից տրամադրվելիք ֆինանսական ակտիվների ձեռք բերում (բաժնետոմսերի ձեռք բերում, վարկերի տրամադրում)՝
<Լրացնել պահանջվող տեղեկատվությունը>

⁵³ Ձևաչափը լրացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջեավորման ձևաչափով բյուջեային ծրագրերի և միջոցառումների սահմանման» և «Ծրագրային բյուջեավորման ձևաչափով բյուջեային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկներով:

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Ծրագիր/Միջոցառում	2017թ. փաստ. (հազ. դրամ)	2018թ սպասվող (հազ. դրամ)	2019թ (հազ. դրամ)	2020թ (հազ. դրամ)	2021թ (հազ. դրամ)
<Պետական մարմնի անվանումը> ⁵⁴		<Ընդհանուր հատկացումները> ⁵⁵	<.....>	<.....>	<.....>	<.....>
Ծրագիր						
<Ծրագրի դասիչ> ⁵⁶	Ծրագրի անվանումը՝ <Ծրագրի անվանումը>	<Ծրագրի գծով ընդհանուր հատկացումները> ⁵⁷	<.....>	<.....>	<.....>	<.....>
	Ծրագրի նպատակը՝ < Ծրագրի նպատակը >					
	Վերջնական արդյունքի նկարագրությունը՝ < Վերջնական արդյունքի նկարագրությունը >					
Ծրագրի միջոցառումներ						
Ընթացիկ միջոցառումներ						
<Միջոցառման դասիչ> ⁵⁸	Միջոցառման անվանումը՝ <Միջոցառման անվանումը>	<Միջոցառման գծով հատկացումները> ⁵⁹	<.....>	<.....>	<.....>	<.....>
	Միջոցառման նկարագրությունը՝ <Միջոցառման նկարագրությունը>					
	Միջոցառման տեսակը ⁶⁰ <Միջոցառման տեսակը>					
....				
Կապիտալ միջոցառումներ						
<Միջոցառման դասիչ>	Միջոցառման անվանումը՝ <Միջոցառման անվանումը>	<Միջոցառման գծով հատկացումները> ⁶¹	<.....>	<.....>	<.....>	<.....>
	Միջոցառման նկարագրությունը՝ <Միջոցառման նկարագրությունը>					

⁵⁴ Լրացվում է հայտը ներկայացնող պետական մարմնի անվանումը

⁵⁵ Լրացվում է պետական մարմնի բոլոր ծրագրերի գծով ընդհանուր հատկացումների հանրագումարը

⁵⁶ Լրացվում է համապատասխան ծրագրի դասիչը

⁵⁷ Լրացվում է համապատասխան ծրագրի գծով ընդհանուր հատկացումների չափը: Այն հավասար է փոխյալ ծրագրի բոլոր միջոցառումների գծով հատկացումների հանրագումարին

⁵⁸ Լրացվում է համապատասխան միջոցառման դասիչը

⁵⁹ Լրացվում է միջոցառման գծով հատկացումների չափը

⁶⁰ Լրացվում է փոխյալ միջոցառման տեսակը՝ Ծառայությունների մատուցում, Տրանսֆերտների պրամադորում, Ֆինանսավորման ծախսերի իրականացում և այլն: Միջոցառումների տեսակների սպառիչ ցանկը և դրանց առնչվող տեղեկատվության վերաբերյալ մանրամասն պահանջները ներկայացված են սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջեարվորման ձևաչափով բյուջեարային ծրագրերի և միջոցառումների սահմանման» մեթոդական ձեռնարկով:

⁶¹ Լրացվում է միջոցառման գծով հատկացումների չափը

		Միջոցառման տեսակը՝ <Միջոցառման տեսակը>					
....					
Հանրային սեփականության կառավարման միջոցառումներ							
	<Միջոցառման դասիչ>	Միջոցառման անվանումը՝ <Միջոցառման անվանումը>	<Միջոցառման գծով հատկացումները> ⁶²	<....>	<....>	<....>	<....>
		Միջոցառման նկարագրությունը՝ <Միջոցառման նկարագրությունը>					
		Միջոցառման տեսակը՝ <Միջոցառման տեսակը>					
		Միջոցառման տեսակը՝ <Միջոցառման տեսակը>					
....					
Ֆինանսական ակտիվների կառավարման միջոցառումներ							
